

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Անասնաբուժական կլինիկական լաբորատորիան (այսուհետև «լաբորատորիա») կազմավորվել է համաձայն Հայաստանի պետական ագրարային համալսարանի ռեկտորի 1998թ. հունվարի 27-ի թիվ 20-ի հրամանի՝ նախկին անասնաբուժական կենտրոնի բազայի վրա:
2. Անասնաբուժական կլինիկական լաբորատորիան Հայաստանի Պետական Ագրարային Համալսարանի ֆունկցիոնալ կառուցվածքային ստորաբաժանում է, որը գտնվում է անասնաբուժական ֆակուլտետի կազմում, որի կանոնակարգը ըստ ՀՊԱՀ-ի կանոնադրության 11 կետի հաստատում է համալսարանի գիտական խորհուրդը և վավերացվում ՀՊԱՀ-ի ռեկտորի կողմից:
3. Լաբորատորիայի հասցեն է՝ ք.Երևան, Կորյունի փողոց 15:
4. Լաբորատորիայի խնդիրներն են՝
 - ա) ապահովել անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուժական ֆակուլտետի ամբիոններին ուսումնական պարապմունքների անցկացման համար անհրաժեշտ ընտանի, փորձնական կենդանիներով,
 - բ) իրականացնել մասնագիտական խորհրդատվություն և անասնաբուժական ծառայություն՝ նպաստելով բնակչությանը պատկանող կենդանիների բուժ կանխարգելիչ աշխատանքների անցկացմանը և համաճարակների կանխմանը,
 - գ) հիվանդ կենդանիների բուժման նպատակով ժամանակավոր կացարանների տրամադրում:
5. Անասնաբուժական ծառայությունը, մասնագիտական խորհրդատվությունը և կենդանիների ժամանակավոր կացարաններ տրամադրելը իրականացվում է ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 27-ի թիվ 471 որոշման 4-րդ կետի «ե» ենթակետով համալսարանին տրված լիազորության շրջանակներում՝ ձեռնարկատիրական գործունեության կարգով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» 2001թ. հոկտեմբերի 10-ի ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված պայմաններով:
6. Լաբորատորիայի գույքը և ֆինանսական միջոցները պատկանում են ՀՊԱՀ-ին:

7. Լաբորատորիան իր գործունեությունը իրականացնում է ՀՀ օրենսդրության.
Համալսարանի կանոնադրության և սույն կանոնակարգի պահանջներին
համապատասխան:

Լաբորատորիայի գործունեության տեսակները

8. Ելնելով ուսումնա-գործնական պարապմունքների լիարժեք անցկացնելու,
կլինիկական առարկաների գծով ուսանողության մասնագիտական որակավորումը
բարձրացնելու, բուժման գործին նրանց մասնակից դարձնելու անհրաժեշտությունից,
լաբորատորիան իրականացնում է՝

- ա) հերթապահություն անասնաբուժական բժշկագիտության ֆակուլտետի
անասնաբուժների միջոցով:
- բ) բուժիչ և կանխարգելիչ միջոցառումների անցկացման ուսանողների ակտիվ
մասնակցությամբ, ֆակուլտետի և լաբորատորիայի անասնաբուժների
հսկողությամբ,
- գ) ոչ վարակիչ հիվանդություններով հիվանդ կենդանիներին ժամանակավոր
կացարանների հատկացում,
- դ) ուսանողների պրակտիկ պարապմունքներն կենդանիներով ապահովելու և հիվանդ
կենդանիների մշտակման ու արդյունավետ բուժում:

9. Համալսարանի ուսումնական պատվերի կատարումը կլինիկական
լաբորատորիայի համար առաջնային և պարտադիր և հանդիսանում է համասարանի
ուսումնական ծրագրի բաղկացուցիչ մասը: Այն իրականացնելու համար
յուրաքանչյուր կիսամյակի սկզբին անասնաբուժական բժշկագիտության և
անասնաբուժական ֆակուլտետի ուսումնական և ամբիոնների գիտահետազոտական
աշխատանքների պլանների հիման վրա կազմվում է կենդանիների մատակարարման և
ձեռքբերման պլան-ծրագիր:

10. Ուսանողների դիպլոմային աշխատանքների կատարման, արտադրական և
ուսումնական պրակտիկայի անցկացման ընթացքում կլինիկական լաբորատորիան և
համապատասխան ամբիոնները կոորդինացնում են իրենց գույքային և տարածքային
հնարավորությունները՝ սերտ համագործակցելով ուսումնա-մեթոդական
գործունեության բնագավառում:

Լաբորատորիայի տնտեսական գործունեությունը

11. Կլինիկական լաբորատորիան սույն կանոնակարգի 4-րդ կետում նշված ծառայությունները իրականացնում է համապատասխան վճարով, ըստ ձևավորված շուկայական գների՝ համաձայնեցված ՀՊԱՀ-ի ռեկտորի հետ:

12. Կլինիկական լաբորատորիայում ծառայությունների դիմաց գանձվող գումարը մուծվում է Համալսարանի հաշվապահություն՝ սահմանված կարգով: Ապահովում է հաշվետվությունների և օրենսդրությամբ նախատեսված այդ բնույթի այլ փաստաթղթերի ճիշտ վարումը և պահպանությունը և պատասխանատվություն է կրում դրանց ոչ ճիշտ վարման, կորուստի համար:

13. Կլինիկական լաբորատորիայի ծառայության համար գոյացած գումարից գանձվում է ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)՝ օրենքով սահմանված չափով:

Լաբորատորիայի կառավարումը

14. Կլինիկական լաբորատորիայի գործունեության ղեկավարությունը իրականացնում է լաբորատորիայի վարիչը:

15. Վարիչը նշանակվում և ազատվում է պաշտոնից ՀՊԱՀ-ի ռեկտորի հրամանով՝ օրենքով սահմանված կարգով:

16. Վարիչը՝

ա) անասնաբուժական - բժշկագիտության և անասնաբուժական ֆակուլտետի ղեկանի հետ համաձայնելով լուծում է կլինիկական լաբորատորիայի գործունեության վերաբերյալ բոլոր հարցերը համաձայն սույն կանոնակարգի դրույթների:

բ) ղեկավարում է կլինիկական լաբորատորիայի գործունեությունը, ինչպես նաև անմիջական մասնակցություն է ցուցաբերում կենդանիների բուժման և հիվանդությունների կանխարգելման աշխատանքներում:

գ) ՀՊԱՀ-ի կողմից տրված լիազորությունների սահմաններում իրավունք ունի կնքել տնտեսական և այլ պայմանագրեր, այդ թվում օտարերկրյա կազմակերպությունների քաղաքացիների հետ:

դ) ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի համաձայնությամբ ռեկտորին առաջարկություններ է ներկայացնում կլինիկական լաբորատորիայի աշխատողներին աշխատանքի նշանակելու, տեղափոխելու, ազատելու, ինչպես նաև նրանց խրախուսելու կամ կարգապահաան տույժերի ենթարկելու վերաբերյալ:

ե) պարտավոր է պահպանել աշխատանքային և կատարողական կարգապահությունը, ապահովել իր տնօրինությանը հատկացված պետական գույքի պահպանումը և արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն կրել պատճառված վնասների համար:

զ) պատասխանատու է լաբորատորիայի աշխատանքային գործունեության հետ կապված փաստաթղթերի ճիշտ վարման և պահպանման համար:

17. Սիջոցներ է ձեռնարկում աշխատանքի անվտանգ պայմանների, ինչպես նաև բնապահպանական, սանիտարա-համաճարակային և հիգիենիկ անվտանգության ապահովման ուղղությամբ ըստ սահմանված կանոնների և պատասխանատվություն է կրում դրա համար:

18. Կլինիկական լաբորատորիան վերակազմավորվում է կամ գործունեություն է դադարեցնում է ՀՊԱՀ կանոնադրության սահմանված կարգով:

19. Անասնաբուժական լաբորատորիայի աշխատանքային և ֆինանսական հաշվետվությունը յուրաքանչյուր ամսվա վերջում ներկայացվում է ՀՊԱՀ-ի ռեկտորին և հաշվապահություն: